

ՆԱՌԵՐԱՋՔԻ ՊՐԱՎՈՒՅՑ ԽԱՆԱԳԻ ՏՐՈՅԱ Ա Յ ԱՅՐԱՐ
ՀԱՅ ԱԿԱ ՀԱՅԱԳԻ ՎԻՄԱՆԻ ԲԱԼՋԻ ԳՐ ԽԱՎԱ Ա Յ ԱՅՐԱՐ
ՀԱՅ ԱԿԱ ՀԱՅԱԳԻ ՎԻՄԱՆԻ ԲԱԼՋԻ ԳՐ ԽԱՎԱ Ա Յ ԱՅՐԱՐ
ՀԱՅ ԱԿԱ ՀԱՅԱԳԻ ՎԻՄԱՆԻ ԲԱԼՋԻ ԳՐ ԽԱՎԱ Ա Յ ԱՅՐԱՐ
ՀԱՅ ԱԿԱ ՀԱՅԱԳԻ ՎԻՄԱՆԻ ԲԱԼՋԻ ԳՐ ԽԱՎԱ Ա Յ ԱՅՐԱՐ

ՅՈԳԵՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՄԵԱՑՈՐԴՆԵՐԸ ՄԵԶԱՍՈՒՄ

Ա. Տէր-ՊօՂոսեանի

(Շարունակութիւն և վերջ¹)

Եկեղեցին որոշ օրեր է նշանակել մեռեալների հոգիները պատ-
ելու, պաշտելու համար. դրանք են՝ հինգ նաւակարիկներին յա-
ջորդող օրերը—մեռելոց օրերը, բացի դորանից մի օր էլ յափկա-
պէս եկեղեցում քօնելու համար—Տօն ամենայն սրբոց հնոց եւ
նորոց (Allerseelenfest, Allerheilgen): Մատաղը—մեռելածաշը
օրնելու համար քահանայի ձեռքով որոշ կրօնական արարողու-
թիւններ են կարդացում և, կարծեմ, Մաշտոցից աղօթքներ կար-
դացում:

Հոգուն պաշտօն կատարելը մեռածի մերձաւոր ժառանգների
պարբռաւորութիւնն է: «Ձինացուն ամենամեծ դժբաղդութիւն զլում
եթէ երեխայ չունի, որ այս պաշտամուքնը մարուցանէ»²:

¹ Տես Մուրճ 1900 թ. № 4.

² Bastian—Preuss. Expedition. (=Ա. Բաստիան.—Պուռասական գիրքն արշաւանք), I, էջ 205.

Արեղեան, նույտուլ էջ 20, 21. «Ամեն մէկ մեռեալի բաժանւած հո-
գին՝ բաց մանաւանդ ծերերի հոգին, մահանից իրող առաջին՝ օրերում
և ամերուշ առաջին դարւաւ ընթացքում առանձին խնամքի է կարօտաւմ
Այդ պարբռառով հայ գիւղացու համար անզաւակ մեռչիլը մի մեծ դժբա-
ղդութիւն է, Բաց եթէ մէկը մեռնում է օրարութեան մէջ, ուր հոգու ապ-
քունքից սպասած հողածութիւնը չանձն առնուլ մէկը չըկալ դժբաղդու-
թիւնը աւելի մեծ է»:

Այսպէս է և հայի համար։ Անգաւակ ամուսինները ինքզինքնին խիստ անմիտթար են գգում, որ իրենց տօջախի կրակը՝ վառ պահով լինելու չե այլ են, որ ազգականների, գնացող եկողի առջև շուրջ պիտի փակւին, բայց ամենից աւելի մըրագանջութեան նիւթն է այն, որ իրենց հոգու մասին մնածող չի մնալու։ Օգնութեան հարգը գինուում է սակայն—վերցնում են մէկը իրը որդեգիր, որի վրայ ծանրանում է հոգուն պաշտօն կապարելու պարագաւորութիւնը։ Բայց և եկեղեցին իր վրայ է առնում այս պարագաւորութիւնը, անզաւակ ամուսինները կարող են իրենց ինչն ուստացածքը փոխանակ ու է որդեգրի թողնելու, կուակել եկեղեցուն, և վերջինս բարեկան մէկ կամ մի քանի անգամ (նայած կուակւած գումարի բանակութեանը և դրած պայմանին) նոցահոգւ յիշակին պաշտօն կը կապարէ։ Ամենաապահովն ի հարկէ մի եկեղեցի կառուցանելն է, որովհետեւ ամեն պարագի ժամանակ նոցահոգին կը յիշի և կ'ալոթւի յափապէս զեկեղեցիս շինողաց, երախսուորաց, պորշաբերից համար։ Այնքան բազմաթիւ եկեղեցիների գոյութիւնը Հայաստանում այս տեսակէսից հասկանալի է դառնում։ Երաքանչիւր քայլափոխին հանդիսած մագուռները մի մի դամբարաններ են ու է մէկի մի սուրբի նշխարներով, ուր կայնակ մի սեղան, բարեկան դէմ մի անգամ նորա հոգուն մէկ պարագ մափուցանելու համար։

Հոգիներն՝ ինչպէս կենդանի մարդիկ, ցանկանում են կերակրւել։ Դրա համար նոր հանգուցեալի սենեակում ամբողջ շարաթը մի կոտր հաց և ամանով չուր են թողնում, այն յայտնի դիմաւորութեամբ, թէ հոգին՝ օրն անմիջապէս չի հեռանում սենեակից, կամ սենեակը կրկին այցելելիս քայլցած և ծարաւ շմեայ ննջցեալին պարանքելիս՝ բերանումը մի կոտր նշխարը են դնում և կամ հէնց մի կոտր հաց սրսի վրայ են քցում և այնպէս թաղում և բնձայ-

¹ Հմմր. Աբելեան նոր տեղ էջ 70.

² Տիմ Աբեղեան, նույնուել էջ 21 համաձայն «Ազգ. հանդէս» II. 179, և I. 310. Բայց վերովիշեալներից պէտք է եղրակացնենք, որ այս և ուրիշ հոգածութիւնները, ինչպէս մեռեալի քթում խունկ դնելը, հանգուցեալի հոգու սճանապարհորդութիւնը դէպի միւս աշխարհ դիւրացնելու և ալնտեղ հոգու աղաղաք կեանքը բարեկաւելու համար չեն, ինչպէս պ. Աբեղեան

ւած նւէլների զգայական վայելումին մեռեալ հոգին ոչ միայն կարող և կարօպ է ենթադրում¹, այլ նա նոյն իսկ մասնակցում է մարդկացին զւարձութիւններին։ Սյօ կերպ ըմբռնելլ յարաքեռում՝ է դեռ այսօր հայերի մէջ², Մեռելաճաշի (քելեխ) ժամանակ ննջեց յեալի հոգին ընդունում է իբրև չերկաց, նոյն իսկ իբրև ինքը—հիւրասիրողը։ Անդիսանելի կերպով այդ մասնակցողից քաշւելով, սովորութիւն դարձաւ ճաշի ժամանակ նորա մասին գովասանքով խօսել և առհասարակ մեռեալների մասին լաւ ասել կամ ոչինչ (de mortuis nil nisi bene): Ճաշին մասնակցողները ուփում և խմում են մեռեալի հոգու ներկայութեամբ և նորան էլ մասն ու բաժին հանում, գերեզմանի նոր հողակոյսի վրաց մի բաժակ գինի ածելով (ինչպէս այդ անում են օրինակ Թիֆլիսում) և աւելացած ուգելիքն ու խմելիքը գերեզմանի մօքը թողնելով հեռանում են։ Մեռելաճաշը մատաղի կամ հոգեհացի անւան բակ կրկնուում է յաճախ մեռեալի հոգու յիշարակին³:

Է ենթադրում, այլ պարզապէս հոգին քաշցած չըթունելու համար։ Հոգին խնամելը ամեն բանից առաջ ուշւած է դէպի նրա Փիզիկական կեանքնու բարելաւումը։ Դնջեցեալի քթածակերի մէջ խոռնկ զետեղելը, մեռեալը օրհնած ջրով լւանալը, սպիտակ սաւանով փաթթելը, նրա զգեաթեները մաքրելը, կրօնական ծէսով անբիժք կափարելը հօ նպարակ ունին հոգու կրկին միացումը մարմնի հետ ախորժ և մաքուր դարձնել։ Հոգին սովորաբար քթի միջովն է կափարում իր ելումուռը և խոռնկը, իր հոդի ախորժալի զբուռումովը հաճելի կը դարձնի նրա վերադարձը (դես նաեւ Աբեղեան, նոյն տեղ, էջ 23): Մաքրութեան համար էլ լւանում են թէ մարմինը և թէ չորերը և պատանքում են միան սպիտակ կտորով, որով հերք աշխոտ մարմնի և չորերի մէջ՝ հոգին էլ կալդորուի։ Մահանից հետո ամբողջ ութն օր՝ ինչպէս և կիրակինամուտներին, ճրադ վառ թողնելը ոչ թէ «հոգու ճանապարհը դէպի միւս աշխարհը լուսաւորելու» համար է, այլ հակառակ ուղերութիւնը լուսաւորելու համար, որպէսզի վերադառնալիս (և ոչ այն կողմը գնալիս) ճանապարհները խաւարի մէջ չըմդնեն ու նեղանան, կամ ինչպէս ինքը պ. Աբեղեան մի ուրիշ տեղ (էջ 24) գրում է՝ «երդիքից ներսը թքելով և անիծելով» չը հեռանան, իրենց հեռը տառնելով տաճ բաղդատորութիւնը։

¹ Շուլցէ. Նոլնտեղ, էջ 253.

² Աբեղեան, նոլնտեղ, էջ 69. «Նախնեաց հոգիները իրենց սերուճդւ գւարձութիւններին մասնակցում են են».

³ Հմմդ. Աբեղեան, նոլնտեղ էջ 23.

Ենչպես մի հոգածական ասացւած էլ պատմում է փճն անցքեր
ունի մարմինը, որոնցից կարող է հոգին դուրս փախէլ,¹ և նրա
ինքն իրան խեղթով (ինքնասպան որ excellency, քանի որ հրա-
գէններ գոյութիւն չունեին դեռ ևս), արգելում է հոգուն մաքուր
անցքերով իր ճանապարհը գոներու, առ սրբաւած կը լինի անմա-
քուր ճանապարհներով անցնել: Հետեւանդը կը լինի այն, որ կը պշտուի
հոգին, որի հետ և մարմինը. որովհետեւ հոգին կարող է նրգին
մլանալ մարմին հետ և կընդուրի մշտ այն ճանապարհը, որով նա
հեռացիլ էր: Ա ա թէ ինչոք մեկնելու է որ եկեղեցին մերժում է
ինքնասպաններին մաքուր մեռեալների շաբքում—հասարակաց զե-
քեզմանոցում ապատրարան տալ:

Սկզբում մեռեալների համար առանձին հանգստարաններ չեն
եղել այլ իրենց հանգիստը զգել են ուղղակի այնքեղը, ուր նքա-
դադարել են ապրել: Մեռեալին թաղելը աւելի ուշ ժամանակ-
ւայ սովորութիւն է և արդինք ոչ թէ առողջապահական կամ ու-
ժիշ որ և է տեսակիցի, այլ այն բանի, որ զիշակերնեղը ուզելով դիակի
միսը և, որ զիշաւուրն է, դորա հետ միասին և արիմուը, վաճա-
նէին ուրիմն մեռեալի հոգին. այդ պատճառով սովորութիւն դար-
ձաւ դիակիլ ծածկել քարերով. մեռեալին թաղելը ոչ թէ առող-
ջապահական պաշտօնեաների օրոշումն է, այլ միայն կրօնական զըրի
շասնաւած կանոններին» բաւականութիւն դալու համար է, որ Ա-
քիքոնր հողովթեթև ծածկում է իր եղբօր դիակը. բարեպաշտութեան
մաքուր զդացմունքներ կարող են միացած լինել սրան, բայց իսկապէս
որոշով մրապարկերը աբունի իիսկանում մեզ հանդիպածն է, այն
է թէ զթաւածի հոգին մըս կողմը հանգիստ չէ գոյնում:² Թալ-
ման արարողութեանը ներկայ եղաները չերմեռանդութեամբ մօ-
պանում են գերեզմանին և ամեն մելու մի քառա՞ն հող է աւելացնում
վրան. այս մինոյն սովորութիւնը եղել է նաև Հռմերական լոյների
մօր, որոնք մրածում էին թէ հոգին այնքան ժամանակ հանգիստ

¹ Հուլիս նույստելլ էջ, 331.

² E. Rohde—Psyche. Seelenkult und Unsterblichkeitsglaube der Griechen (=լ. Առնելու Պարիսէ ուղարկի Ողեպաշտութիւնը և Անմանութեան հաւատքը Յոնների մէջ) Freib. in B. 1890-) 4.

չէ գպնում և չի հեռանում իւր դիակ մարմից, որքան ժամանակ նա վարահ չէ, թէ դիակը ոչնչանալուց արդէն ապահոված է: Մեր երկրի զանազան կողմերում պարահում է մարդ շատ գերեզմանների, աւելի ճիշճ՝ քարակոյսերի, այս ինչ քաջի, այն ինչ հսկաչի, դեի, և այնի անունով, բաց իրօք ու և ցեղի, սերունդի նախահայրերի—ազնաւուրների դերեզմաններին¹, ուր ամեն անցորդ իր բարի պարականութիւնն է համարում մի քար վերցնել և ացդ կոլորին աւելացնել: Մեր այժմեայ մեծ մեծ գերեզմանաքարերը ապահովում են դիակը գիշակերներին ճարակ դառնալուց, այսինքն հոգու վերջին ապաստարանը ոչնչութեան մարդկուց փրկում են:

Մի ժամանակ էլ մարդիկ իրենց մեռեալները հենց իրենց բնակարանների մէջն են թաղել, գան մի ու և է անկիւնում: Վանում գոյութիւն ունեցող մի սովորութիւնից ապահովապէս կարելի է եղակացնել, թէ մեր նախահայրերը մեռեալները թաղել են գան մէջ, ուր երեխնակի այցելութեան էին դալիս հոգիները: Խըթման երեկոցնեանները ընսանիքի ամենակրպսերը վառելով մի մու՛ և խընկամանի մէջ խունկ ծխելով, շրջում է դան բոլոր մասերը, մինում է ամեն մի յարկի և շինութեան մէջ, ասելով: «Հնարհաւոր Քրիստոսի ծնունդ և յայգնութիւն (կամ ըատ պարշաճի՝ յարութիւն), ծեզ և մեզ մեծ աւետիք»: Մինսւմ է ամեն դեղ՝ ուր մարդ չկայ, ուր նոյն իսկ բնակութեան համար չէ ասհմանւած, ամենուրեք ոլիտի կրկնէ նոյն խօսքերը: Այդպէս էլ հարկաւոր է: որովհետեւ պատմերից մէկը կարող էր այնպեղ թաղւած կամ նրա հոգին պատահամբ այդ բողէին այդանու լինել²: Այս սովորութեան միակ նորութիւնը անկասկած Քրիստոսի անունով շնորհաւորելն է:

¹ հմմո. Արեւեան. նոյնուրել, էջ 71.

Կարծում ենք թէ ազնաւուրին (ազն-աւոր? Խմբ.) գլխաւոր նշանակութիւնն է ցեղի նախահայր, իսկ «հսկար» (Riesen), ինչպէս Պ. Արեւեանն է թարգմանում, երկրորդական նշանակութիւնն է, ըստ սրում նախահայրը, ցեղի սկզբնահայտերը, երեսականը է իրբե մեծ, ուժեղ, քաջ—հսկար մէկը, որով աւս գալափարը միացել է առաջնին: Ազնաւուրների քարակովով գերեզմանները երբեմն մի քանի մէտր երկարութիւն ունին, ժամանակի ընթացքում կուրակած քարերի պատճառով, բաց և անպէս ասւում է թէ, աղնաւուրը, շար երկար լինելուն համար, ծունկից ծալած են թաղել:

² Հմմո. Արեւեան, նոյնուրել, էջ 23.

Հոգիների սիրած մի բնակարանն էլ թանիրն է, որն արդէն ընքեան մի սուրբ տեղ է¹. Թռնիր շնչնքելը: այսինքն թանիրի վերայազդ մի կողմից միւսն անցնելը, ինչպէս և թռնիրի շուրջը նստած՝ ուսներ շարժելը՝ մեղք է համարւում, որովհետեւ հազիները կանհանգաւանան: Թռնիր շնչնքողը պէտք է շնչնքը քանդէ, այսինքն նոյն շարժումը հակառակ կերպով կապարէ: Հոգին մեծ սիրով է թափառում և մինչև իսկ բնակում դիակի մօգելը, նորաշրջակալքը²: Տեղ-տեղ կայ այն հաւատքը, թէ մեռեալի հոգին քաշէ գալիս դիակի շուրջը մինչև այն բոպէն, երբ թաշման արարողութիւնը կապարելիս՝ երգւում է սփառք ի բարձունաշ. ասում են նոյնպէս թէ հրեշտակը առնելով ննջեցեալի հոգին, բարձրանում է մինչև ամսկերը, ուր չար ու բարի հրեշտակները կոխեն մղում այդ հոգին փիրապետելու համար, մինչև սփառք ի բարձունաշ երգելու բոպէն (երբ, ինչպէս յայցնի է, ծիսակապարութեան ժամանակ սկսում են փոսումը զետեղած ննջեցեալի վրաց հողն ածել), որ ժամանակ բարի հրեշտակները յաղթելով՝ դանում են հոգին Աստուծոյ յանձնելու:

Նախամարդկանց մօգ նշանաւոր մեռեալների համար սովորութիւն է դառնում առանձին զերեզմաններ շինել, որոնցից առաջ են գալիս ապագաց մատուռները, վանքերը, տաճարները և այն, որոնք դառնում են հոգիներին պաշտօն մատուցանելու կերպոններէ Շամբարանների (Grabanlage) շինութիւնը տաճարների զարգացման սկզբնակէտն է³: Բոլոր եկեղեցիների մէջ, որոնք շինուած են բոլորովին նոր ժամանակներում, ամփոփւած կամ սուրբելու նշխարներ կամ նոցա մասունքներու նշխարները կամ մասունքը գեղեցւած են լինում մի գերեզմանում, որը սովորաբար մի առանձին բաժանմունքի—մատուոփի մէջն է լինում: Այս սուրբերի գերեզմանները հրաշքի և բժշկութեան աղբիւրներ են և նոցա բժշկական:

¹ Արեղեան, նոյնտեղ, էջ 6, 67. Թռնիրի սրբութիւնը մեր պառաւները, վաճախ ալնպէս են բացագրում թէ ալնտեղ եփումէ հաց, որը եկեղեցւ ս. խորհրդի նիւթն է, ինչպէս և զինին, որոնց գերին թափողի և կոխոսովով ալքերը կը կուրնանա:

² Հմմո. Արեղեան. նոյնտեղ, էջ 18.

³ Լիպպէրտ—Կրօները, էջ 243.

ամենալաւ դարման—ոչ թէ հողն է իբրև հող, այլ իբրև մի իր, որի վրայ սուրբի շւաքն է ընկել, Մշոյ Ս. Կարապետ վանքում իբր թէ Լուսաւորչի ձեռքով Յօվհ. Մկրտչի նշանաբերից մի մասը թաղւած է այսպէս կոչւած՝ «Ս. Կարապետի գերեղմանառում» Գերեղմանի կողքին կայ մի փոս, ուստից ուխտառները հող են վերցնում և գանում իրենց հերո ու գործածում իբրև բժշկական միջոց, իբրև Դեղ (գերեղմանի հողը ամենեին չէ պակասում, որով հերև վանքի ծառաները դորա հոգսը քաշում են):

Հոգին իբրև նիւթեղին մի իր, ուրեմն բարածութեան մէջ, պիտի ունենար մի կերպարանք: «Եցնպիսի բացաբրութիւններ, թէ հոգին քառակուսի է, ինչպէս Պիւթագորաս, կամ թէ նա մի շըրջան կամ գնդակ է կազմում, ինչպէս Արքիդաս՝ նէնթադրում, կամ թէ նա ամենանուրբ արոմներից է բաղկացած՝ ինչպէս Դէմոկրիտ և Էպիկուր կարծում էին, իբրև փիլիսոփայական խորհրդածութիւնների արգասիք, այսպեղ սպասել կարելի չէ յեռ ևս»¹. Հոգին մարդուս միւս ինքն է. Հոգիբանական երգերի մէջ փոփոխակի կերպով մարմինը և հոգին ընդունուում են իբրև «իսկական մարդը», ևս ինքը². այսուել մարդը կրկին գոյութիւն ունի—իւր զգայական երևոյթով և իւր անրեսանելի պատկերով (Abbild—յունաց օճօխու, հոռմ. genius, արար. ջին, պարս. Փրաւաշի, եգիպտ. քա), որը մարդու մահւամբը ազատ է դառնում: Երազը բացաբրում էին նրանով, որ մարդուս քնած ժամանակը միւս-ինքը—հոգին—գործում է և ուրիշ հոգիների հետ յարաբերութեան մէջ է մդնում: Մենք պահել ենք յեռ այսպէս կոչւած հոգեհամալը (Seelenzahl), այսինքն՝ մարդկանց թիւը իմանալու համար չենք հարցնում ո՞ք քանի մարդիկ, այլ քանի՞ հոգի, այն պարզ պարմառով որ նա ինքը, իսկական մարդը և նորա էութիւնը համարել ենք նորա հոգին: Հոգին ունի սովորաբար մի երկրորդ մարդու, մի ուրիշ փոքր մարդու, մանրանկարի ((homme en miniature, homoneulus) կերպարանքը³:

¹ Շուլցէ, նոյնուել, էջ 333:

² Ոոհդէ, նոյնուել, էջ 5:

³ Մի նկար կար կախւած մի եկեղեցում, որը պառկերացնում էր

Քայլց հոգիները սպավէրացւում են նաև մի քանի որոշ կենդանիների կերպութանքով էիրի թռչուններ, մանաւորապէտ երրի աղաւնիներ, իբրև միջազններ, մելուներ բարփապէս իբրև թիթեաններ (psychē = հոգի և թիթեաննիկ): Հոգիները ներկայացնում են նաև իբրև սողուններ, որոնց յարկապէս օձերը և մաղեսները զերաշառում են: Չորքօքանի կաթնասուններից հոգու կենդանիներն (Seelenthier) են մեսնաւորապէս մուկը, աքիս և կապուն¹: Հայերը տմենայն երկիւղածութեամբ են վերաբերում իրենց շնչքի մէջ բնակութիւն հասպալած օձին, և նորան հալածելը կամ սպանելը ու է շժբաղդութեան նախադուռն համարում: Այդ օձը շատ անգամ ընդունում է մարդկացին կերպարանք և նեղութեան շէպքում զալիս է օգնութեան, կամ անարդարութիւն կարարւած շէպքում պատպաժը շիր սպանձնում:

Թոնիիների մէջ, մանաւանդ ական մէջ բնակում են նախահայրերի հոգիները²: Վանեցու համար մեծ ուրախութիւն է, եթէ մի թիթեաննիկ իր ասպարանը զսել է իրենց թոնիրի ական մէջ, դա պասիրի հոգու ներկայութիւնն է աւելում և նշանակում է դանբաղդասութիւնը³:

Մարդուն կենդանութեան ժամանակ ևս հոգին կարող է երբեմն երբեմն հեռանալ մարմնից, սակայն այս ելումու վքը մեծ վրանդների ենթակայ է, նաև կարող է ճանապարհը կորցնել և այլ ես վերադառնուլ զկարենալ: Մի սլարմածքում հոգին՝ մողեսի կերպարանքով, քնացողի բերանից դուրս է զնում, անցնում է մի առու սթրա վրայ դրած սրի վրայով, բայց յետ վերադառնալ չէ կարող, քանի որ սուրը վերցւել էր: Քնայած կախարդի բերանից հոգին կազուի կամ կարմիր մկան կերպարանքով դուրս է վազում: Կարելի:

Յովհաննէս Մկրտչի զլսարումը — արինաթաթախ մի զլուխ ափոէի մէջ դրած ներկայացնում է մի թագաւորական զգեստով կնոջ, իսկ վերեսումը մի խումբ հրեշտակներ, որոնք առմզերի մէջ փաթթած մի սոտերամածերեխանք — Յովհաննէսի հոգին — շէպի երկինք են բարձրացնում:

¹ Շուլցէ, նոկնութեղ, էջ 335.

² Հմմու. Աբեղեան, նոկնութեղ, էջ 74 և հետեւեալներ:

³ Աբեղեան, նոկնութեղ, էջ 67, և հետեւեալներ:

⁴ Հմմու. Աբեղեան, նոկնութեղ, էջ 55.

է հոգու կրկին վերադարձը արդելել, ուրեմն կախարդը սպանել, և թէ նորա մարմինը շուռ դալով՝ բերանի մուգը զեղութիւնքը՝¹ Այդ պատճառով մեր պատաւները մեզ արդելում են զիշեր ժամանակ թուրքերի գերեզմանոցների («Ղօռերի») մօսնվա անցկենաւը որպիշեցի հոգիները կատուի (սովորաբար ու կատուի) կերպարանքով ման են գալիս և քաջացած ժամանակ կարող են մեզ ուղարկուած (Յացնի է, թէ, թուրքերը իրենց մեռելների դիակը գերեզմանում չեն ծածկում անմիջապէս հողով, այլ թողնում են մի ազատաբարձութիւն և դէպի դուրսը մի անցք, մի ծակ, որը յետոյ գիշակերների երթևեկութեանն է ծառայում):

Յաճախ զրծ է ածում բարկացած մէկը՝ իր հակառակորդի թուլութիւնը ցոյց տալու համար, այս սսացւածքը. մնա ի՞նչ մարդ է որ, վզակոթիցը բանեմ, հոգին ափիս մէջը կը դնիւ—նա մի ճընճըշիան չափ էլ հոգի չունիս Երևում է որ հոգին մի իր է, որը մի թռչնի պէս է երեակայտում, որ հակառակորդը հազիւ ամենափոքր թռչնի—ճնճլուկի չափ մի հոգի ունի²: Աղաւնին, մանաւանդ սպիտակ արաւնին՝ իբրև արդարների և ու աղուաւը՝ իբրև չարերի հոգին մգնելը սովորական է շատ տեղի թիստ հասակաւոր պառաւը, լարիակալս չարախօս և կախարդ նկատւածը, դեռ ևս կենդանութեան ժամանակ կոչւում է սկս ազաւու: Մէկի վաճ կիսուրի կամ բակի ծառի վրաց նստած աղուաւի կրկալը նշանակում է թէ մի չար հոգի վագախօսում է իրենց մասին. այդ պատճառով էլ զգուշութեան միջոցներ են ձեռք առնեւում, օրինակ՝ չարախօս և չարաչք նկատւածի դրան շէմքի փայտից զողունի մի կրոր դաշում են դանակով ու բերում թռնիրը ցցում ու վառում:

Սպաւերը իբրև հոգի մասամբ պահել է դեռ իր նշանակութիւնը—պառաւները երեխաներին զզու շացնելով՝ ասում են. որ-

¹ Շուլցէ. Նոյնուել էջ 333:

² Պրն. Արեղեան գրում է (Նոյնուել էջ 10. համաձայն «Ազգ. հանդէսական» 317) թէ՝ «բոլոր ինչպէս հասակաւորների, նոյնպէս և երթխաների հոգիները հաւասար մէծ են նկատուում», կան դելեր զոցէն, որ աշխատէս և լուց վերոլիւաւասացածքը զրծ գործածելով Սալմասոցին ինչպէս և վաճեցին մուածում է յոկապէս հոգու մէծ և փոքր լինելու մասին. Հաւանօրէնալու մուածութիւնն ծնունդ են մեր մեծահոգի, փոքրոգի բառերը:

դիս, շւաքի հետ չեն խաղայ. գիշերը երազում կը տեսնես, կարոշ է գալ և խեղջել քեզու Տանը անկարգութիւն անող աշակերտին՝ արեւի առաջ Դրած մի ամանով ջրից պատի վրայ անդրադարձ շողթը ցոյց փալով, զգուշացնում է պառաւ փափը, թէ՛ կարմիր աքաղալը կ'երթայ և վարժապետի ականջին վը խօսի անկարգութեան մասին:

Նաու բնական է, որ հոգին՝ իրրե խսկական մարդ, իրրե մարդու գործող մես ունենալու է մարդու կենդանութեան ժամանակայ բարոյական արժանիքը Եթէ մէկը իր կենդանութեան ժամանակը բարի էր, բարի է և նորա հոգին. Եթէ հակառակը, այսպէս էլ սաւ Բարի և չար որոշում է նոցա կենցաղավարութեան և գործունէութեան համաձայն, և միենոյն հոգին կարող է մէկը բարի՝ միւսը չար համարել: Այսպէս մեր Դրացի ժողովրդի Աստուծոյ անունը՝ Պարսկաց Դաւաս, հայերէն դեւ-չար ոգու նշանակութիւնն է սրացել:

Խնչպէս կենդանի մարդկանց մէջ բարեկամներ և թշնամիներ կան, այդպէս և հոգիների մէջ. սակայն երկու սին ևս հարկաւոր է պաշտել, խնամել¹: Ամենափարբական խնամքը կայանում է նոցա կերակրելու մէջ, որը ծնունդ է դալիս զրհաքերութեան սովորութեանը: Հոգիների ամենախոշոր կերակուրը նոյնպէս հոգին է, այսինքն մարդուս արիւնը: Մարդակերը խմելով ուրիշի արիւնը՝ կրկին նպատակի է հետևում: Նախ՝ Դորանով իր հոգին է ոչնչացնում: (մրաբերէք մեր արիւնուշտ, արիւնարրու, արիւնածարաւ բառերը): Այժմ Դեռ չափ տեղ քուրդերի, Կովկասեան զանազան ցեղերի և լեռցնի հայերի մօտ գոյութիւն ունի արեան վրէժ լուծելը մարդակերի նման: Եթէ սոցա թշնամին իր բնական մահով մեռել կամ ուրիշի ձեռքով սպանել է, բաւականութիւն սրացած չեն համարի Դեռ, իրենք պէտք է սպանեն, լադիկապէս նորա արիւնը

¹ Պ. Աբեղեանը հաւատովիացնում է (Խոնդել էջ 7) թէ՛ մեզանում թէսպէտ սպախենում են սի՝ ծխանման դներից, ոչարունքութից, բայց նոցա չեն սպատում: Սական ուրիշ առթիւ գրում է՝ (Խոնդել էջ 18)՝ «հանգ գուցեալ չար (վեասակար) հոգին հաշտեցնելու համար ուրելիք և խմելիք իրը ընձար, զո՞ւն դա դալիս նրանու (Հմմտ, նոնդել էջ 96), որաց (Քիւրդերը) սիրելուց չէ որ սպատում են նրան (Ա. Սարդոյին), ալլ վախիցու».

Համեն կամ թափեն այն անձնաւորութեան գերեզմանի վրայ, որի մահան վրէժը սոքա առաջադրել են լուծել: Ենթադրում է թէ նոր մորթած կենդանու տաք արիւնը խմելն էլ մէկին ուժեղ, սրբուր կը դարձնի. այդ աղդեցութիւնն ունի նաև աքաղաղի սիրուր առանց ծամելու կուլ տալլը. ուս ամենալաւ միջոցն է համարւում մութից փախեցող երեխաները սրբուր դարձնելու համար: «Արթւր կը խմեմ», զուռում է իւր հակառակորդի վրայ սաստիկ նեղացած մէկը, դրանով սպառնում է՝ թէ իր հակառակորդը մարմնով եւ հոգով, ամբողջսպին ոչնչութեան լինթարկէ¹:

Հոգեպաշտութիւնը սկսում է իբրև առանձին-առանձին ցրւած հոգիների պաշտամունք. բայց այսպեղից մի քայլ է միայն մինչև հաւապաշտութիւնը (նախահայրերի պաշտամունք, Ahnen cult). ընդունիքի մեծ հօր հոգին դառնում է յեպնորդների ընդհանուր պաշտամունքի առարկան: Ասու ածներ հայր կոչելլը, ինչպէս և իւրաքանչիւր ցեղի իր որոշ Աստծուց՝ նախահօրից սերիլլ սկսում է այս ժամանակ. իւրաքանչիւր ցեղ, աղդ, ունի իր յապուկ ցեղական, ազգացին ասուածը, իր պաշտպանը, ինսամոլը (երբայեցոց Եհովան էլ մի այդպիսի ցեղական ասուած էր): Ընդունիքի հայրերից մասնաւրապէս նրա հոգին առանձին պաշտամունքի նիւթ է դառնում, որը անսովոր, արտաքոյ կարգի ոյժով և ձիրքերով օժբւած էր եղել և շատ քաջագործութիւններ արել—հերոսը, որի պաշտամունքը անւանում ենք հերոսակաշտութիւն (Heroencult):

Աւելի ուշ, երբ շատ ընդունիքներ ի մի ձուլւեցան և կամ մի ընդունիք սաստիկ ուժեղացաւ և իշխանութիւն ձեռք բերաւ միւսների վրայ, ընդհանուր պաշտամունքի առարկան այս յաղթով, իշխող ցեղի նախահայրը դարձաւ, միւսներին երկրորդական վեց տալով. իսկ բանաստեղծները, երգիչները այս երկրորդական ասուածները տիրող ասուուծոյ ընդունիքի թեկերի մէջը հիւսեցին, համարելով որդի, թռու, եղբայր, եղբօրորդի և այն և այն, յաղթւած ցեղերը շոյելու և յաղթողի լուծը տանելի դարձնելու համար (օրինակ Հայկի և Արմենակի վերաբերմամբ պատմւածը): Բայց այսպիսի խառնուրդից և միաւորումից յեպոյ էլ դեռ այդ զանազան ասուած-

¹ Հմմդ. Արելիան, նոյնուել էջ 11.

Ները պահպանում էին իրենց մասնաւոր յագիռ թիւնը. Ֆառաւմ էր՝ արարչագործութիւնից որոշ մասեր վերագրել որոշ ասուածներին, որպէս զի սուացւէր բազմաստուածութիւնը (Polytheismus) իր խառնիճաղանչ և բազմազան ասպուածներով. Համեմատաբար շատ ուշ միայն մարդը խորհրդածութեան առաւ, որ այսպէս բազմաթիւ ասուածներ չեն կարող զոյսւթիւն ունենալ իրար կողքին, որ Դքամարդիացին սրբեղծագործութիւններ են, այլ պէտք է լինի Մէկը, մի բացարձակ էակ, ամենակարարեալ հոգին, մի խսկական Սուրած, որն սուելջել է ամենքը: Այդ եզրակացութեան է հասնում միաստածութիւնը (Monotheismus), իբր թէ միասուածեանի Ասպուածը իր մարածութեան արդարութիւնը և իր ցանկութեան մարմար գույքը: Այս էլլինէր: